ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ի պատասխան Ձեր 30.03.2026թ. հ. 85-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

Ավան վարչական շրջանի բակային տարածքների սանմաքրման աշխատանքներն իրականացվում են ըստ սահմանված ժամանակացույցի:

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի Թափոնների տեսակավորման վարչության կողմից դիտարկվել է տեսակավորման թափոնամանների տեղադրման հնարավորությունը Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.2/11 հասցեում, որտեղ առկա են խոչընդոտներ կապված տվյալ հասցեում թափոնամանների տեղադրման և հետագայում դրանց սպասարկման հետ, մասնավորապես՝ փոքրիկ բակային հատվածում կայանված մեքենաների և նեղ անցուղիների միջով տեսակավորման կոնտեյներների անվտանգ սպասարկումը հատուկ տեխնիկայի միջոցով: Ուստի՝ տեսակավորման կետի տեղադրումը այդ նեղ հատվածում ներկայումս նպատակահարմար չէ, և որպես այլընտրանքային հասցե առաջարկվում է Տաշքենդի հ.15 հասցեն:

Համատիրությունների լիազորությունների չկատարման վերաբերյալ տեղեկացվում է, որ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքի համաձայն՝ համատիրությունները հաշվետու են շենքերի բնակարանների սեփականատերերին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ